Հայտարարություն

Մասնագիտական պաշտոնների 6-րդ ենթախմբի թափուր պաշտոնը համալրելու համար մրցույթ հայտարարելու մասին

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը վարկանիշային ցուցակի համապատասխան համարներում գրանցված անձանց հրավիրում է **առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության մասնագետի (ծածկագիրը՝ 94-30.2-Մ6-1)** թափուր պաշտոնը համալրելու համար հարցազրույցի, որը տեղի կունենա **2026 թվականի փետրվարի 17-ին, ժամը՝ 11^{00}-ին** ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում (ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ N 7):

Հարցազրույցին հրավիրվող անձը հարցազրույցի օրը պետք է ներկայացնի հետևյալ բնօրինակ փաստաթղթերը՝

1) անձնագիր (ՀԾ համարանիշ)
2) դիպլոմ (առկայության դեպքում)
3) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում)
4) արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասից զինվորական կցագրման վկայական կամ համապատասխան տեղեկանք:

Հարցազրույցը կանցկացվի **«Հարցարան»** ձևաչափով:

Հիմնական աշխատավարձի չափը կազմում է՝ 139 776 (մեկ հարյուր երեսունինը հազար յոթ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ:

Նշված պաշտոնին հավակնող անձը պետք է լինի բարեկիրթ, պարտաճանաչ, հավասարակշռված, ունենա նախաձեռնողականություն և պատասխանատվություն ստանձնելու կարողություն:

Քաղաքացիական ծառայության նշված թափուր պաշտոնի անձնագրի էլեկտրոնային տարբերակին կարող եք ծանոթանալ **հղումով**:

Աշխատավայրի հասցեն է՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7:

Վարկանիշային ցուցակում 1-5-րդ համարներում գրանցված թեկնածուների մասնակցության հաստատման վերջնաժամկետի օրն է **2026 թվականի փետրվարի 5-ը,** ժամը՝ 24:00-ն:

Վարկանիշային ցուցակում հարցազրույցին մասնակցությունը 1-5-րդ համարներում գրանցված թեկնածուների կողմից չհաստատվելու դեպքում 6-11-րդ համարներում գրանցված թեկնածուների մասնակցության հաստատման վերջնաժամկետի օրն է **2025 թվականի փետրվարի 9-ը**, ժամը՝ 24:00-ն:

Անհրաժեշտ տեղեկությունների համար կարող եք զանգահարել 060 65 06 26 հեռախոսահամարով կամ ուղարկել հաղորդագրություն gegharkunik.andznakazm@mta.gov.am էլեկտրոնային հասցեին:

03.02.2026թ.

Հավելված N 36
Հայաստանի Հանրապետության
Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղարի
2023 թվականի հունիսի 2-ի N 379-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 .Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության (այսուհետ՝ Վարչություն) մասնագետ (ծածկագիրը՝ 94-30.2-Մ6-1)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3.Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետներից մեկը կամ ավագ մասնագետներից մեկը կամ Վարչության մասնագետը /**Փոփ. 02.02.2024թ. N 63-Ա/**

1.4. Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները՝

1. մասնակցում է բնակչության պետական սոցիալական ապահովության ծրագրերի իրագործման աշխատանքներին.
2. մասնակցում է Մարզում հաշմանդամության իրավիճակի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների մշակման աշխատանքներին.
3. մասնակցում է անապահով անձանց, զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներին՝ անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացին, բնակարանային պայմանների բարելավման, կարիքավոր զինծառայողների ընտանիքների հաշվառման, բնակարանային գործերի կազմման աշխատանքներին.

Իրավունքները՝

1. Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, նյութեր, կարծիքներ, առաջարկություններ և այլ փաստաթղթեր.
2. ստանալ տեղեկատվություն կենսաթոշակի իրավունքի ապահովման հետ կապված գործառույթների վերաբերյալ.

3. ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն գործազուրկների հաշվառման, բնակչության զբաղվածության հետ կապված խնդիրների լուծման գործընթացի վերաբերյալ.

Պարտականությունները՝

1. Ներկայացնել առաջարկություններ սոցիալական ապահովության ծրագրերի իրագործման աշխատանքների վերաբերյալ.
2. Կազմել Վարչության աշխատանքային ծրագիրը, ներկայացնել Վարչության պետին.
3. աջակցել Մարզում հաշմանդամության իրավիճակի վերաբերյալ տարեկան հաշվետվությունների կազմմանը և ներկայացնել Վարչության պետին.
4. Ուսումնասիրել անապահով անձանց, զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներին՝ անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացի, բնակարանային պայմանների բարելավման, կարիքավոր զինծառայողների ընտանիքների հաշվառման, բնակարանային գործերի կազմման աշխատանքները, ինչպես նաև Աշխատակազմ ներկայացված դիմում-բողոքները և տեղեկատվություն ներկայացնել Վարչության պետին:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Առնվազն միջնակարգ կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Աշխատանքային ստաժ չի պահանջվում

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1.Հաշվետվությունների մշակում

2.Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն

3.Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1.Փաստաթղթերի նախապատրաստում

2. Ժամանակի կառավարում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության, որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում է տվյալ մարմնի կառուցվածքային

ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ շփվում է պատվիրակված լիազորությունների շրջանակներում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է մասնագիտական խնդիրների բացահայտմանը և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն: